


ԽՄ ԻՂԶԼ

Եւ որտումս մի իղձ ծնուեց,  
Մի իղձ սիրուն ու պայծառ.  
Եւ կրծքումս մի կայծ ծնուեց,  
Կայծ հրաշեկ գիւրավառ.

Ես ցանկացայ գործ դարձնել  
Այդ սուրբ իղձը պաշտելի,  
Ես ցանկացայ լուսի փօխել  
Փայլիլող կայծն իմ որտիւ.

Անսիրտ մարդիկ սպանեցին  
Նորածին իղձս որտիս մէջ,  
Կոպիտ ձեռքով կայծն հանգցրին,  
Կրծքիս դագրեց ել և էջ.

Գեորգ



ԽԱԶՈՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

VI

Արովեանի վէպի առաջին գլխի բովանդակութիւնը  
պատմելուց յետոյ այժմ՝ անցնենք երկրորդ զլիխն։ Սա  
սկսում է Երեանի բերդի կլասիկ նկարագրութիւնով,  
որին հետեւում է Արարատեան դաշտի ամառուայ իրիկ-  
նադէմի նկարագիրը. վերջինս Արովեանի գոչի տակից ելած-  
հատուածներից ամենաընտիրն է։ Ապա հեղինակը ընթեր-  
ցողին հանդիսատես է դարձնում Երեանի թուրերի մա-  
հառլամի սուգին, որի առթիւ էջմիածնի պատուիրակները  
նուէրներ են բերում Ասրդարին։ Այդ օրը երեկոյեան

ժամերգութեան ժամանակ, երբ եկեղեցիները լցուած են լինում մեծ բազմութիւնով, պարսիկները սկսում են կոտորածը, որից յետոյ նրանք հայերին քոչել են տալիս դէպի Կարս և դէպի Բայաղէդ։ Յետոյ վիպասանը գործողութիւնը փոխադրում է Խլղարտքիլիսա, որտեղ ցոյց է տալիս ընթերցողին տեղացի հայերի ու պարսիկների կուտի տեսարանները, հայերի պարտութիւնը, բազմաթիւ պատանիների ու մանուկների գերութիւնը և նահատակութիւնը վագերաօիրու Հասան-խանի հրամանով։ Վէպի այս գլուխը բոլորապին միջանկեալ է և շատ չնշին կոսպերով է միացած ամբողջի հետ։ Գլխի վերջին մասերում մի վայրկեան միայն երեւմ է Աղասին և իսկոյն էլ չքանում։

Երրորդ և վերջին գլուխն է իսկապէս առաջնի շարունակութիւնը։ Հեղինակը պատմում է, թէ ինչպէս Աղասու վարմունքի պատճառով Քահաքեռի գիւղացիներին տարան, լցրին Երևանի բերդը։ Այնուհետեւ միմեանց ետեից նկարագրում է Աղասու և իւր խմբի ընդհարումը պարսիկների հետ Արարանում, նրանց վարած կեանքը Փամբակի հայերի մէջ, բազմաթիւ կուները Անիի աւերակներում, Աղասու ցանկութիւնը Անին շենացնելու, նրանուաց բանակ գնալը, Երևանի բերդի առումը, Աղասու մահն ու թաղումը։

Արովեանը իւր վէպը անուանել է պատճական, Ակըզբում իսկապէս որ այդ երկը վէպ է, բայց քանի գնումէ, այնքան աւելի նմանուում է վիպանման պատմութեան։ «Վէրք Հայաստանիի» Երկրորդ և Երրորդ գլուխները նկարագրական այնպիսի հատուածներ ունեն, որոնց բելինքութեանը ոչ մի հայ հեղինակի նկարագրութիւն չէ հասել։ այդ գլուխները արժէքաւոր են հայ ժողովրդի քաղաքական կացութիւնը ուսումնասիրելու համար։ Կենցաղադրական տեսակէտից նրանք չեն կարող մրցել առաջին գլխի հետ, որը շատ մեծ նշանակութիւն ունի, որոհետեւ այս գլխումն է տալիս Արովեանը ժամանակակից գիւղացու տնտեսական գրութեան և նիստ ու կացի պատկերը։ Այդ է պատճառը, որ մենք ընդարձակ պատմեցինք այդ-

գլխի բովանդակութիւնը մեծ մասամբ հիւսելով վէպից քաղած հատուածները:

Բայց վէպի առաջին գլուխը յատկապէս մեծ արժէք ունի նրանով, որ այդտեղ մենք տեսնում ենք, թէ ինչպէս է վերաբերում փակ անտեսութեան շրջանի հայ դիւզացին իւր տնտեսութեանը, հոգեոր դասին և վաճառականութեանն ու փողային տնտեսութեանը. ուրիշ խօսքով՝ այդ գլխում գտնում ենք շատ որոշ կերպով արտայայտուած գիւղացիական իդէոլոգիա, որի քննութեանը և անցնում ենք այժմ։

## VII

Գիւղացիական աշխարհահայեացքի հիմքը կազմում է կարծիքը ֆիզիքական աշխատանքի մասին։

«Եահախ տեղը՝ դատած (ուրիշի-թ. Ա.) մալը ու տիլը ու դատարկ քնիլը հարամ՝ ա,—ասում է վէպի հերոսը, Աղասին,—մարդ պէտք է ինքն էլ աշխատի, որ կերած հալալ ըլի» \*),

«Ով թամբալ ա, թող նա դարդ անի» \*\*)—նկատում է քէթխուդաներից մէկը երեան հանելով դիւղացու ըմբռունումը ֆիզիքական աշխատանքի կարեօրութեան մասին։

Ընթերցողներից շատերը կժպտան կարծելով, որ արդէն չափազանցութեան ենք հասցնում ամեն բան կապելով որոշ գառակարգերի հետ։ Միթէ կարող է լինել,—կառեն, —որևէ է դասակարգ, որ ֆիզիքական աշխատանքի գիրայ արհամարհանքով նայէ, միթէ ամենուրեք չենք լսում աշխատանքի փառաբանութիւն։ Ով ուզում է, ժպտայ, իսկ մենք լսենք ականաւոր հեղինակներին ու սոցիոլոգներին։

«Յոյն և հոգմայեցի հասարակութիւնները, —ասում է անուանի Բելտովը, —ինչպէս յայտնի է, ստրկատէր հասարակութիւններ էին։ Այսպիսի հասարակութիւնների մէջ ամբողջ ֆիզիքական աշխատանքը, արտադրութեան ամ-

\* ) «Լէրը Հայաստանի», եր., 26.

\*\*) «Նոյնը», եր., 57.

բողջ գործը ընկնում է ստրուկների վղին։ Ազատ ժարդը ամաչում է այդպիսի աշխատանքից»<sup>\*</sup>):

«Հերոսական շրջանից յետոյ,—գրում է հոչակառոր սոցիոլոգ Խոլի Լիպպերտը,—պետութիւնների մէջ ֆիզիքական աշխատանքի ճակատին դրոշմուած էր ամօթանքի կիրքը, իսկ ամօթալի էր համարուում ֆիզիքական աշխատանքը այն պատճառով, որ աշխատանքի բաժանման ժամանակ՝ այն (ֆիզիքական աշխատանքը. Թ. Ա.) վիճակուեց մարդկութեան կախում ունեցող մասին—ստրուկներին։ Այսպիսի մարդիկ, ինչպիսին են Պլատոնը և Արիստոտելը, լիովին համաձայն են, որ ֆիզիքական աշխատանքը ամօթալի բնաւորութիւն ունի. այդ աշխատանքը ստրկութեան նշան է»<sup>\*\*</sup>):

«Ազնուականները,—նկատում է ֆրանսիական յեղափոխութեան պատմագիր Վիլհելմ Բլոոը, — վիրաւորական արհամարհանքով էին նայում քաղաքացու վերայ, որ իւր սեփական աշխատանքով էր ձեռք բերում ազրուատի միջոցները։ Գիւղացիների ու ճորտերի վերայ նայում էին աւելի իրեն աշխատող անտառնի, քան մարդկանց վերայ»<sup>\*\*\*</sup>):

«Երկար եղունգները,—գրում է սոցիոլոգիայի մեծ վաստակաւորը, Էդուարդ Տայլորը, — նոյն իսկ մեզանում նշան են այն բանի, որ նրանց տէրը ձեռքի ոչ մի աշխատանքով չի պարտպում, Զինաստանում ու սրան մերձակայ երկիրներում թոյլ են տալիս, որ եղունգները անեն ու հանեն հրէշտաւոր մեծութեան, եղունգների երկարութիւնը ազնուական ծագման նշան է. և տիկինները յատուկ արծաթեայ պատեաններ են կրում մատների ծայրին իրենց եղունգները պաշտպանելու կամ գո-

<sup>\*</sup>) Н. Бельтовъ, «Къ вопросу о развитіи мон. взгляда на исторію», СПБ, 1906, եր. 116.

<sup>\*\*)</sup> Ю. Липпертъ, «Исторія культуры», пер. Острогорскаго П. Струве. СПБ 1907, եր. 209.

<sup>\*\*\*)</sup> В. Блоѣ. «Французская революція» пер. Львовича. СПБ, 1906, եր. 6.

նէ ուրիշներին հաւատացնելու, որ իրենք երկար եղունգներ ունեն։ Աւրիշ գէպքերում՝ թոյլ են տալիս եղունգներին աճել իրրե նշան այն բանի, որ նրանց կրողը կրօնական կեանք է վարում և չի զբաղւում ոչ մի աշխարհային աշխատանքով<sup>\*</sup>)։

Կարծում ենք, որ այս բոլորը հասաւառում են այն, որ ամեն դասակարգ ֆիզիքական աշխատանքը ջատագովով չէ։ Այն դասակարգերը, որոնք ապրում են առանց ֆիզիքական աշխատանքը անձամբ կատարելու, իրենց աշխարհահայեացքի մէջ այդ աշխատանքի գովարանութեանը տեղ չեն տալիս իսկ ընդհակառակը, այն հասարակական խմբերը, որոնք ապրում են ֆիզիքական աշխատանքով, վերջինին մեծ տեղ են տալիս իրենց աշխարհահայեացքի մէջ։

Իսկ ինչպէս է նայում գիւղացին երկրագործական աշխատանքին։ Մենք բոլորով, որ երկրագործ ժողովորդի զաւակներ ենք, որ փոքրուց անդադար գրականութեան մէջ կարգացել ենք երկրագործ ժողովորդի կեանքի, գութանի ու արօնի փառաբանութիւն, չենք էլ ենթագրում, որ կազող է ուրիշ տեսակ վերաբերմունք լինել գէպի աշխատանքի այդ տեսակը։ Սակայն սոցիոլոգիան ապացուցանում է, որ հաշտ վերաբերմունքը գէպի երկրագործութիւնը մշտական երեսյթ չէ։

Այս անդամ խօսողը Աինտենիկ Փիլիսոփայութեան սիստեմից հեղինակն է, Հերբերտ Սպենսերը։

«Բեխարիտների կրօնական պատուիրաններից մէկը հետեւալն է ասում։ Դուք պէտք է ոչ տներ շինեք, ոչ հացահատիկ ցանեք, ոչ խաղողի որթ տնկէք և ոչ էլ ունենաք. այլ պարտական էք ձեր կեանքի բոլոր օրերը անցկացնելու վանների մէջ։ Նոյն ձեռով և է, Վ. Բոբեռտսնը վկայում է, թէ հին նաբատէեան համայնքների միութեան օրէնքներից մէկը յայտարարում էր, որ քրէտ-

<sup>\*</sup>) Թ. Թայլորъ. «Антропология» пер. Ивина, СБП. 1908, եր. 238.

կան յանցանք է հացահատիկ ցանելը, տուն շինելը կամ ծառ տնկելը . . . Այդ թափառականները ամուր և անշեղ հետեւում էին մի սկզբունքի—իւրաքանչիւր գրաւած երկիր գաղանել ամայի ու ընդարձակ արօտատեղի։ Գործողութիւնների այսպիսի եղանակի վերայ նրանք նայում էին, որպէս կրօնական պարտքի վերայ»<sup>\*</sup>)։

Նոյնը նկատում ենք նաև հրեայ ժողովուրդի այն դրույնների մէջ, որոնք առաջացել են նրա թափառական կեանք վարելու շրջանում<sup>\*\*</sup>)։

Բայց երբ ժողովուրդը որսորդական ու անամնապահ վիճակից անցնում է երկրագործական կեանքին, փոխում է ամրող աշխարհահայեացքը, սկսում է իդէալականացնել ապրուստ ձեռք բերելու այս եղանակը և նոյն իսկ կրօնն էլ սրբագործում է նրա այս համոզումը։ Այսպէս օրինակ, երբ հին պարսիկները թափառական կեանքը թուղին և գարձան նստակեաց ու երկրագործ ժողովուրդ, այն ժամանակ նրանց կրօնն էլ նուիրագործեց երկրագործական աշխատանքը։ Այս հաստատում են Զենդ—Աւեստայից քաղած հատուածները։

Այն հարցին, թէ որտեղ է երկիրը իրեն ամենից աւելի երջանիկ զգում, Ահուրա-Մազդան պատասխանում է.—Այնտեղ, որտեղ հաւատացեալը ամենից աւելի է հացահատիկներ, խոտ և պտուղներ մշակում, որտեղ նա ոռոգում է անջրդի հողը և խօնաւ գետնից ջուրը հանում ու ցամաքեցնում է, որովհետեւ գժբախտ է այն հողը, որ երկար ժամանակ անմշակ է մնում»<sup>\*\*\*</sup>)։

Հին պարսկի հայեացքով երկրագործական աշխա-

<sup>\*</sup>) Г. Спепсеръ, «Основанія соціології» СПБ. 1876, եր. 634.

<sup>\*\*</sup>) «Եւ եղեւ Հարէլ հովիւ խաշանց եւ Կայէն գործէր զերկիր. Եւ եղեւ յետ աւուրց երեր Կայէն ի պտղոյ երկրի պատարագ Աստուծոյ. Ո. Ճ Եւ Հարէլ յանդրանկաց խաշանց իւրոց եւ ի պարարտաց նոցա. Եւ հայեցաւ Աստուծ յԱրէլ եւ ի պատարագն նորա. Եւ ի Կայէն եւ ի զոհս նորա ոչ նայեցաւ», Ծննդոց, Գ. 2—3.

<sup>\*\*\*</sup>) Д. П. Шантепи де ля Соссей. «Иллюстрированная история религий», пер. подъ-ред. В. Липдъ, Москва, 1889 հատ. II, եր. 205:

տանքը կրօնական պարտականութիւն է, որը կատարել—  
նշանակում է ծառայել Աստծուն և կռօւել չարի դէմ:

«Ով հացահատիկ է ցանում, նա ցանում է սրբու—  
թիւն» \*):

Երբ ծլումէ հատիկը, այն ժամանակ դեերը փշում են,  
Երբ ընձիւղներ է արձակում, այն ժամանակ դեերը  
հազում են,

Երբ բարձրանում են ցօղունները, այն ժամանակ  
դեերը լաց են լինում,

Երբ տտօք հասկեր են գուրս գալիս, այն ժամանակ  
դեերը փախչում են» \*\*):

Երկրագործական աշխատանքի ջատագովութեան ա—  
ռատ նմուշներ կան նաև հայ գիւղացու երգերի մէջ,

Եղագն ընկաւ ծմակին

Աստուած կտայ մշակին.

Առւր գութանը ծիր գնաց

Տէր մշակը քամակին:

Սերմէ, սերմէ, այ մշակի,

Սուրբ ա, սուրբ ա քո փեշակ,

Մինին հազար տուր, Աստուած,

Քեզ ձէն կտան տէր-մշակ \*\*\*):

Օրհնեալ է Աստուած,

Յիշեալ է Աստուած:

Ա՛յ պապիս գութան,

Աստծու բան,

Ակօսիդ զուրբան \*\*\*):

Օրհնեալ ես, Աստուած,

Յիշեալ ես, Աստուած:

Օրհնի մեր գութան—

\* ) Նոյնը, եր. 205.

\*\*) Թ. Տայլօր. «Անտրոպոլոգիա», եր. 379. հմմա. ծելա Սօս—  
սեյ եր. 205.

\*\*\*) Կոմիտաս վրդ. եւ Մ. Արեգիան. «Հազար ու մի խաղ»  
Ա. յիսնեակ, եր. 9—10.

\*\*\*\*) Նոյնը, Բ. յիսնեակ, երս. 15.

Աստծու բան,

Օրհնեալ է մեր բան \*),

Գութան, գութան, հա գութան,

Աստծու իրան փայ, գութան,

Սազաշխարքիս փեշակնում

Դուքեզ չունես թայ, գութան \*\*):

Բոլոր ասածները ապացուցանում են այն, որ իւրաքանչիւր ժողովուրդ կամ դասակարգ իդէալականացնում է այն զբաղմունքը, որով կարողանում է սեփական կարիքներին բաւարարութիւն տալ: Արդէն կարելի է եզրակացնել, թէ ինչ վերաբերմունք պէտք է ունենան վէպի գիւղացիները դէպի երկրագործական աշխատանքը:

«Բախտ, բախտ էս ա, » \*\*\*)—բացականչում է գիւղացիներից մէկը հակադրելով գիւղական անտեսութիւնն ու կեանքը մի այլ անտեսութեան ու կեանքի:

«Իր անկած ծառի տակին քնելը, իր բհամ բերած պտուղն ուտիլը աշխարք աժի», — աւելացնում է նա \*\*\*\*):

Գիւղական անտեսութեան յաջողութիւնը թոյլ է տալիս գիւղացուն առատաձեռն լինել, և նա պարծենում է իւր այդ յատկութիւնով, Քաղաքային կեանքի թոյլ զարգացումը դեռ ևս չէ կարողացել խախտել այդ համոզումը:

«Տարէնը որ հաղար շուն, գէլ, թուրք հայ, աղքատ, զարիր, զուրբաթ հացս չուտեն, տանս չքնեն, գինիս շմեն, իմ աչքը հէջ քուն կդայ: Գեօւս էլ որ քանդեն, ձէն չեմ տալ: Իքուս մասըլի (պտղի) տուտը թէհրան, Ստամբուլ ա հասել Ո՞ւմ հադդն ա, որ մէկին չէ ասի: Ինչ ուտում են, չեն ուտում, էնպէս ասած ունիմ, որ հարգայ, խուրջին էլ լցնեն, որ տանեն իրանց տունը... Տաշտումը հաց ունենամ, կարասումը գինի, ջուալումն»

\* ) Նոյնը, Յ. յիսնեակ, եր. 18.

\*\*) «Գեղարուեստ» խմբ. Գ. Լեռնեանի, № 2, եր. 26.

\*\*\*) Վ. էրը Հայաստանի, եր. 36.

\*\*\*\*) Նոյնը, եր. 37.

ալիր, հերն անիծած, որ չփփ-չփփլախ էլ ըլիմ, գարդ-  
անեմ։ Օչազս լիքը ըլի, տանս՝ բարաքեաթ, որդիքս՝ սազ-  
սալամաթ։ Թող օրը հազար մարդ մտնի, հազար մարդ  
գուս գայ, ինչ եմ հոգում, հացն Աստծունն ա, ես էլ  
հետը, ով հասնի, թող ուտի։ Տէրին փառք, տեղը հլա-  
շատ կայ, տղեքս սազ ըլին, ջանս ապրի։ Աստուած իր  
ստեղծած բանգի որդղը ինչպէս կը կտրի։ Գդակս ծուռը  
կդնեմ, քէֆս արամիշ կանեմ։ ով թամբալ ա, թող նա  
գարդ անի»\*)։

(շաբունակելի)

**Թ. Աւդալրէզեան**

### ԿԱՆՑԻ ԻՄԱՅՈՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

#### 1. Էմալիրիզմի պատմութիւնը.

Էմալիրիզմը յունական շրջանում սկսեց զարդանալ յան-  
ձենս սովիեստների և իւր կեանքի հենց այդ առաջին շրջանից  
երեան հանեց իրեն յատուկ թոյնը—սկեպտիցիզմը։—չկայ օքեկ-  
տիւ ճշմարտութիւն, «Մարդը, փոփոխական, յեղեղսուկ և իւր  
բոպէական տրամադրութիւններին և վիճակներին գերի մարդն  
է ճշմարտութեան չափը», ահա նրանց ընորոշ բանաձեւը։

Էմալիրիստիկ գծեր կային ըաւական չափով նաև Արիս-  
տոտելի, այսուհետեւ շատ խոշոր չափով էպիկուրեանների և  
ստոյիկեանների մէջ։ Ոակայն Էմալիրիզմը մեծապէս զարդացաւ  
միայն նոր գարում, այն էլ գլխաւորապէս Անգլիայում։

Նոր գարու սկիզբն Էմալիրիզմի գլխաւոր ժողովրդակա-  
նացնողն հանգիստացաւ Կանցլեր Բէկոն, թէև նրանից  
առաջ նրա անուանակից Ռոժեր Բէկոնը և ուրիշները արծարծել  
էին նոյն սկզբունքները։ Բէկոնը ոչ թէ սաեղծեց Էմալիրիստիկ

\*) «Վէրը Հայաստանի», եր. 37.